ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԿՏՐՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԻ ՏԻՊԻ ՄԱՍԻՆ

ՄԿՐՏԻՉ ՋԱՐԴԱՐՅԱՆ

Հայաստանի հելլենիստական քաղաքներից Արտաշատն առաջինն էր, ուր Արտաշեսյանների օրոք հիմնադրվեց համապետական անդրանիկ դրամահատարանը։ Հայտնի չէ, թե Արտաշեսյան ո՞ր արքայի օրոք է սկսվել այստեղ դրամներ թողարկվել[1], սակայն Տիգրան I-ի (123 (՞)—96 մ. թ. ա.) դրամները, հավանաբար, կտրված են Արտաշատում[2]։

Տիգրան II-ի օրոք (95—56 մ. թ. ա.), տնտեսական ու քաղաքական բուռն իրադարձությունների հետ կապված, Արտաշատի դրամահատարանը ծավալում է դրամների զանգվածային արտադրություն, որը չի նվազում Տիգրանի կողմից Անտիոքում, Դեմետրիայում (Դամասկոս) և Տիգրանակերտում երեք նոր դրամահատարանների ստեղծումից հետո էլ[3]։

Արտաշատի դրամահատարանը գործել է նաև Տիգրանի հաջորդների օրոք։ Որոշ ընդհատումից հետո այն իր գործունեությունը վերսկսել է նույնիսկ Հռոմի կողմից Հայաստանի անկախության վերացումից հետո։ Այդ են ապացուցում Կոմմոդոսի կայսրության շրջանում (180—192 մ. թ.) այստեղ թողարկված ΑΡΤΑΞΙCΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩC *(Արտաշատի մայրաքաղաքի) խորագրով քաղաքային պղնձե դրամները[4], որոնք, Արտաշատի դրամահատարանի գործունեության վերջին վկայություններն են։ Հռոմի, իսկ քիչ ավելի ուշ Սասանյանների վարած քաղաքականությունը, ինչպես նաև վերջիններիս արծաթի առատ ներհոսքը Հայաստան կասեցնում են ազգային դրամների դարավոր թողարկումը։*

---

[1] *Բեյրութում Ա. Տոնապետյանի հավաքածուում պահվում է մի պղնձե դրամ, որը նա վերագրում է Արտաշես I-ին, սակայն այդ ենթադրությունը կարող են հաստատել միայն նոր գյուտերը (Ա. Տոնապետյան, Արտաշիսյան հարստության հիմնադիր՝ Արտաշես Ա-ի պղնձե դրամը, «Հայկազյան հայագիտական հանդես», Պեյրութ, 1971)։*

[2] Henry Seyrig. Tresor monetaire de Nisibe, Extrait de la („Revue Numismatique", Paris, 1955, pp. 85—128, pl. 1), *Ջ. Պտուկյան, Արտաշիսյան հարստության դրամները, Վիեննա, 1969, էջ 42—43, տախտ. 1։*

[3] *Այդ է վկայում 1971 թ. Հին Արտաշատի № 1 բլրի պեղումներից հայտնաբերված Տիգրան II-ի 28 դրամից բաղկացած գանձը, որտեղ Հայաստանում (հիմնականում Արտաշատում) թողարկված 27 դրամի հետ մեկտեղ գտնվեց միայն մեկ անտիոքյան դրախմա։ Բուն Հայաստանում կտրված դրամների գերակշռության մասին են խոսում նաև Տիգրանի դրամների տարածման նախնական քարտեզագրական տվյալները։*

[4] E. Babelon, Artaxicata („Revue Numismatique", s. IV, vol. XV, Paris, 1911, p. 363). *Ջ. Պտուկյան, Հայաստանի վերաբերյալ Հռոմեական դրամներ և մեդալիոններ, Վիեննա, 1971 (Ազգային մատենադարան, Մժն, էջ 192, № 602), Կ. Բասմաջյան, Հայկական ընդհանուր դրամագիտություն և Հայաստանի վերաբերյալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 63—64, տախտ. Բ, թիվ 7, Խ. Մուշեղյան, Հայաստանի դրամային շրջանառության պատմությունից («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 92—93)։*

Հելլենիստական Հայաստանի երկու մայրաքաղաքներում՝ Արտաշատում և Տիգրանակերտում թողարկված դրամների առանձնահատկությունների բացահայտումը մինչ այժմ արգելակվել է տեղում հայտնաբերվող նյութերի բացակայության պատճառով։ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից ձեռնարկած Հին Արտաշատի պեղումներն ի հայտ բերեցին հարուստ հնագիտական նյութեր, որոնց մեջ զգալի թիվ են կազմում ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայկական հելլենիստական դրամները[5]։ Վերջիններիս շարքում մեզ հետաքրքրող դրամների խումբը կազմված է Տիգրան II-ի և Արտավազդ II-ի թողարկած պղնձե միավորներից։ Դրամներից երկուսը գտնվել են Արտաշատի պեղումներից, իսկ մեկը՝ Հացավանի հելլենիստական ամրոցի տարածքից[6]։ Նույնատիպ դրամներ պահվում են նաև Հայաստանի պատմության պետական թանգարանում, Էրմիտաժում, արտասահմանյան մի շարք թանգարաններում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում։ Բացառությամբ առաջին երեքի, մյուս նմուշների մեծ մասը հրատարակված է, բայց դրանք կամ վերագրվել են այլ դրամահատարանների, կամ էլ դասվել անորոշ ծագմամբ դրամների շարքը։ Այս խմբի դրամները թեև պատկանում են տարբեր արքաների, սակայն, ինչպես ցույց կտա նկարագրությունը, պատկերատիպով միանման են։

1975 թ. ամռանը, Արտաշատի պեղումների ընթացքում № 2 բլրից[7] դեպի հյուսիս-արևմուտք ընկած փոքրիկ բլրակի վրա բացվեց մի դամբարան, որտեղ զանազան զարդերի հետ մեկտեղ գտնվեց նաև երկու դրամ։ Դրանցից մեկը պարթևական Հրահատ III արքայի (70—57 մ. թ. ա.) դրախման էր, իսկ մյուսը՝ Տիգրան II-ի անունը կրող պղնձե խալկոսը[8]։ Վերջինիս Ա երեսին պատկերված է արքայի աջ շրջված կիսանդրին, գլխին Արտաշեսյանների թագը, որի ականջակալներն իջնում են մինչև ուսերը, արքայական ժապավենի ծայրերը ընկած են մեջքին։ Ձախից Տիգրանի գլխի ետևում դրոշմված է Α տառը, Բ երեսի վրա դրոշմված է հաղթության թևավոր աստվածուհի Նիկեի պատկերը։ Դիցուհին քայլում է դեպի ձախ, աջ ձեռքը առաջ պարզած, իսկ ձախը՝ կոնքին հենած։ Մակագրությունը չի պահպանվել։ Դրամի (քաշը՝ 5,05 գ, տրամագիծը՝ 18—21 մմ) երկու երեսներն էլ երիզված են կետավոր շրջանակով։ Այս նույն տիպին են պատկանում նաև Բրիտանական թանգարանում և Զ. Պտուկյանի հավաքածուում պահվող Տիգրան II-ի պղնձե միավորները՝ ΒΑΣΙΛΕΩΣ-ΤΙΓΡΑΝΟΥ մակագրությամբ[9]։

---

5 Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах (*«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 58—59)*։

6 Б. Н. Аракелян, Гарни II, Результаты раскопок 1951—1955 гг., Ереван, 1957, стр. 83, *Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1963, № 12, էջ 103—110*։

7 *Բլուրները համարակալված են արշավախմբի կողմից։*

8 *Հելլենիստական պղնձե միավորների քաշը շատ անկայուն է։ Այն զգալի տատանումներ է տալիս նույնիսկ դրամների նույն արժեքի և նույն ծագման դեպքում։ Ստորև բերվող օրինակները ես բացառություն չեն* (А. Н. Зограф, Античные монеты, Материалы и исследования по археологии СССР, вып. 16, М.—Л., 1951, стр. 49).

9 *Զ. Պտուկյան, Արտաշիսյան հարստության դրամները, էջ 48, № 17—1, էջ 49, № 18, տախտ. 3, № 18, տախտ. 6, № 17—1։*

Նկարագրվող օրինակների շարքում կան նաև մի խումբ այլ դրամներ, որոնք իրենց տիպով թեև նախորդների կրկնությունն են, բայց որոշ մանրամասներով զատվում են նրանցից։ Դրանցից է 1953 թ. Հացավանում գտնված Տիգրան II-ի խալկոսը (քաշը՝ 5,05 գ, տրամագիծը՝ 15 մմ)։ Դրամի Ա երեսին դրոշմված է թագակիր արքայի պատկերը, ձախից, գլխի ետևում, նույն Λ տառն է։ Տիգրանի դիմաքանդակն այստեղ ավելի խոշոր է և գրեթե զբաղեցնում է դրամի ողջ շրջանակը։ Բ երեսին դրոշմված են դեպի ձախ քայլող թևավոր Նիկեի պատկերը և ΒΑΣΙΛΕΩΣ-ΤΙΓΡΑΝΟΥ *մակագրությունը*[10]*։ Այստեղ ևս դրոշմը գրավում է դրամի ամբողջ շրջանակը (Նկ. 1)։ Նույնատիպ*



Նկ. 1։

դրամներ պահվում են Հայաստանի պատմության և Լոնդոնի բրիտանական թանգարաններում[11]*։*

Ներկայացվող խմբի հաջորդ դրամները պատկանում են Տիգրանի որդուն՝ Արտավազդ II-ին (56—34 մ. թ. ա.)։ Դրանցից առաջինը (Նկ. 2) գտնվել է

Նկ. 2։

1973 թ., Հին Արտաշատի № 8 բլրի պեղումներից (կես խալկոս, քաշը՝ 4,6 գ, տրամագիծը՝ 16 մմ)։ Դրամի վրա դրոշմված է Արտավազդի աջահայաց

10 *Դրամի դաշտի ձախ մասում նշմարվում են* ΛΓ *տառերը։*

11 *Զ. Պ տ ո ւ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 48, № 16, 17, տախտ. 3, № 16, 17։*

պատկերը՝ Արտաշեսյանների աստղազարդ թագը գլխին։ Արքայական ժապավենի ծայրերը, ագուցվելով ծոծրակի վրա, իջնում են մեջքին։ Ի տարբերություն Տիգրանի, Արտավազդը թագը կրում է բարձրացված, ճակատային մասում ամրացված ականջակալներով։ Արքայի պարանոցը զարդարված է եռաշարք մանյակով, իսկ ականջին նշմարվում է օղ։ Ձախից, Արտավազդի գլխի ետևում, ինչպես և Տիգրանի դրամների վրա, դրոշմված է A տառը։ Դրամի Բ երեսը կրկնելով նախորդներին, կրում է թևավոր Նիկեի դեպի ձախ քայլող պատկերը։ Դիցուհին աջ ձեռքը պարզել է առաջ, իսկ ձախը՝ հենել կողքին։ Խորագիրը հետևյալն է՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ։ Դրամի երկու երեսներն էլ երիզված են կետավոր շրջանակով։ Նույնանման օրինակներ պահվում են Փարիզի ազգային մատենադարանում[12] և Հայաստանի պատմության թանգարանի Գ. Գալաճյանի նվիրած հավաքածուում[13]։ Հետաքրքիր է նշել, որ հիշյալ նմուշը վերադրոշմված է փյունիկյան դրամի վրա։ Պղնձե դրամները թողարկվում էին ներքին առևտրի համար և արտաքին շուկա դուրս չէին գալիս, ուստի բացառված չէ, որ այս դրամը Հայաստան է հասել ավարի կազմում, դաշնակից պարթևների հետ մ. թ. ա. 40 թ. Արտավազդի դեպի Պաղեստին կատարած արշավանքից հետո[14]։

Ի մի բերելով նկարագրված դրամների ընդհանուր գծերը, ստացվում է հետևյալ պատկերը. ա) Այս խմբի բոլոր դրամների Ա երեսի վրա, արքայի գլխի ետևում կա նույն A տառը։ բ) Դրամների Բ երեսին պատկերված է թևավոր Նիկեն՝ միևնույն կեցվածքով[15]։ գ) Թագի զարդարանքի մանրամասներն ընդհանուր են Տիգրան II-ի բոլոր դրամների համար։ Դրանց են հարում նաև Արտավազդի թագի զարդերը՝ բացառությամբ յուրահատուկ գծերի։ դ) Տիգրանի դրամները հանդես են դալիս ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ խորագրով, իսկ Արտավազդինը՝ ընդունված ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ ձևով։

Հիշյալ դրամների մի մասը ուսումնասիրողների կողմից վերադրվել է Անտիոքի դրամահատարանին, իսկ մի քանիսն էլ՝ ենթադրաբար Մարաստանի անհայտ կենտրոնին[16]։ Սակայն վերը նշված ընդհանրությունները և հատկապես դրամներից երկուսի հայտնաբերվելը պեղումներից հավաստում են դրանց Արտաշատում թողարկված լինելու փաստը։ Ինչ վերաբերում է այս խմբի դրամների վրա դրոշմված A մենագրին, ապա այն, հավանաբար, ΑΡΤΑΞΙΣΑΤΑ (կամ ΑΡΤΑΞΑΤΑ) բառի՝ Արտաշատ քաղաքի հունական անվանման առաջին տառն է։ A գիրը դրոշմվել է Արտաշատի դրամահատարանի արտադրանքը մյուս կենտրոնների թողարկած դրամներից զատելու նպատակով։ Դրա կարիքը կարող էր զգացվել միայն

---

12 V. Langlois, Numismatique de l'Arménie dans l'Antiquite. Paris, 1859, pp. 33—34, pl. III, № 2.

13 Ջ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 53, № 24, տախտ. 4, № 24։

14 Я. А. Манандян, О торговле и городах Армении, в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 84. Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, стр. 54—60.

15 Դրամների վրա չի երևում, թե Նիկեն իր աջ ձեռքում ինչ է բռնել, սակայն, նկատի ունենալով դիցուհու պատկերման ամենատարածված ձևերը, կարելի է ենթադրել, որ այն դափնեպսակ է։

16 Ջ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 48, 49։

թագավորության սահմաններում նոր դրամահատարանի հիմնադրումից հետո, այսինքն՝ մ. թ. ա. 83 թ. սկսած, երբ Տիգրանը Անտիոքում կազմակերպեց իր դրամների թողարկումը։ Սակայն քարտեզագրական տվյալները ցույց են տալիս, որ, ի տարբերություն դրախմաների և քառադրամների, Անտիոքի պղնձե օրինակները լայն տարածում չեն ունեցել և շրջանառության մեջ են եղել միայն իրենց արտադրման ռեգիոնում[17]։ Ինչ վերաբերում է մ. թ. ա. 72 թ. սկսած Դամասկոսում թողարկվող դրամներին, ապա դրանց ո՛չ արծաթե և ո՛չ էլ պղնձե նմուշները բուն Հայաստանում չեն գտնվել[18]։ Հետևաբար, ներկայացված խմբի դրամները միայն մ. թ. ա. 77 թ. հետո պետք է տարբերակվեն Տիգրանակերտում թողարկված դրամներից[19]։ Մեր այս ենթադրությունը հաստատում է նաև այն փաստը, որ A մենագրով պղնձե դրամներ շարունակում են թողարկվել նաև Արտավազդ II-ի օրոք, երբ հայկական թագավորությունն արդեն կորցրել էր Անտիոքն ու Դամասկոսը, սակայն դրամներ հատվում էին նաև Տիգրանակերտում։

Արտավազդի հաջորդների օրոք զգալիորեն կրճատվում է դրամների թողարկումը Հայաստանում։ Դադարում է և քննվող տիպի դրամների արտադրությունը։ Նշված շրջանի նմուշները զուրկ են տարբերակող մենագրերից։ Դա, հավանաբար, բացատրվում է Տիգրանակերտի դրամահատարանի գործունեության դադարեցմամբ և դրամահատման գործի կենտրոնացմամբ Արտաշատում։ Ճիշտ է, Տիգրան V-ի (մ. թ. 6 թ.) եզակի դրամի վրա կրկին հանդիպում է A մենագիրը, բայց դա ավելի շուտ հետևանք է նախորդների ավանդական կրկնության, քան թե անհրաժեշտության[20]։

Այնուամենայնիվ, վերը բերված դրամատիպը Արտաշատի դրամահատարանում չի մոռացվել։ Երկու դար անց, մ. թ. 180-ական թվականներին թողարկված քաղաքային պղնձե դրամների վրա նորից հանդիպում է դեպի ձախ քայլող թևավոր Նիկեի պատկերը, որը, սակայն, մասամբ տարբերվում է նախորդներից։ Ինչևէ, պարզ է, որ Արտաշատի դրամահատարանը եղել է հայկական դրամահատարաններից ամենաերկարակյացը։

Հետագա հնագիտական ուսումնասիրություններն, անկասկած, ի հայտ կբերեն նոր նյութեր և ավելի կհարստացնեն մեր գիտելիքները Հին Հայաստանի դրամահատման մասին։

---

[17] „The excavations at Dura-Europos". Final report. A. R. Bellinger, The coins, New-Haven, 1949, p. 114, pl. 11, №№ 112, 112a, Գ. Ա. Տիրացյան, Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում («Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 233)։

[18] Այս դրամների տարածման ծայր հյուսիսային շրջանը սահմանափակվում է Մծբինի շրջակայքով (P. Z. Bedoukian. Five hoards containing coins of the Artaxiads of Armenia, Paris, 1968 („Revue des etudes Armeniennes", Nouvelle Serie, tome V, pp. 428—429).

[19] Հավանաբար հենց այդ ժամանակաշրջանն էլ terminus post quem է Արտաշատում ներկայացված դրամատիպի թողարկման համար։

[20] Georges le Rider, Monnales Grecques Acquises par le Cabinet des Medailles en 1959 („Revue Numismatique, Paris, 1960, pp. 20—30), Զ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 62, № 40, տախտ. 5, № 40։

ОБ ОДНОМ ТИПЕ МОНЕТ АРТАШАТСКОЙ ЧЕКАНКИ

МКРТЫЧ ЗАРДАРЯН

Резюме

В числе монет Тиграна II (95—56 гг. до н. э.) и Артавазда II (56—34 гг. до н. э.) имеется группа медных номиналов, которая причислялась исследователями к производству монетных дворов Антиохии-на Оронте и неизвестного центра в Мидии. Однако типологическое изучение всей группы, а также находки подобных монет из раскопок Арташата позволяют говорить об их принадлежности к арташатскому монетному двору.

Монеты этого типа имеют букву А на аверсе, позади головы царя. и изображение крылатой богини Победы—Ники, идущей влево на реверсе. Буква А на аверсе является монограммой Арташата (АРТАΞСАТА). Чеканилась она с целью разграничения производства монетного двора Арташата от тигранакертских выпусков. Потребность в этом должна была возникнуть лишь начиная с 77-го г. до н. э.—то есть после основания Тигранакерта.

В дальнейшем, при последующих Арташесидах, отличительные монограммы на монетах исчезают. Причиной тому послужили, вероятно, ослабление Армении и концентрация монетного производства исключительно в Арташате.